
**ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԻՐԱՎԱԳԻՏԱԿԱՆ
ԵՆԹԱԼԵԶՎԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԻՄԱՍՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ**

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Ա. Ա.

Իրավունքի բնագավառի ապագա մասնագետի օտարալեզու պատրաստության հիմնահարցը արդիական է: Իրավունքի լեզուն տարբեր կերպ է անվանվում և դասակարգվում՝ հատուկ նպատակների լեզու՝ ՀՆԼ (*LSP – language for special or specific purposes*), իրավագիտական ենթալեզու, գիտական (կամ մասնագիտական) լեզու¹:

Հ. Ուիդդոնսոնը բնութագրում է լեզվի այդ ենթախմբերը «ոչ թե որպես անգլերենի՝ պաշտոնապես (ձևականորեն) սահմանված տարատեսակներ, այլ որպես հայեցակարգերի, մեթոդների և ընթացակարգերի համընդհանրական բազմության այնպիսի իրազործում, որոնք որոշվում են տվյալ գիտության հետազոտությունների շրջանակով և անկախ են որևէ կոնկրետ լեզվից»²:

Քանի որ իրավունքի լեզուն ոչ միայն նշանային (սեմիոտիկ) համակարգ է, այլ նաև իրավական համակարգի անքակտելի մաս (համակարգ՝ իր ավանդույթներով, ուրույն տրամաբանությամբ և գործառույթների յուրահատկություններով), ապա այդ լեզվի առանձնահատկությունները բխում են բուն իրավունքի առանձնահատկություններից: Դրանցից գլխավորներն են.

Իրավական եզրույթների բարձր աստիճանի վերացականությունը: Իրավունքի լեզուն տարբերվում է շատ այլ ՀՆԼ-երից նրանով, որ նկարագրում է մետաֆիզիկական երևույթները: Բանն այն է, որ օրենքը, որպես այդպիսին, գոյություն չունի ֆիզիկական աշխարհում: Քանի որ այն ամբողջովին ստեղծել են մարդիկ, իրավունքը կապվում է որոշակի հասարակության մշակույթի հետ, այլ կերպ ասած՝ այն սոցիալական ֆենոմեն է: Այս համատեքստում չափազանց սերտ է լեզվի և իրավունքի կապը: Բանն այն է, որ իրավական հասկացությունները և նորմերը կարող են արտահայտվել միայն լեզվի միջոցով: Լեզուն իրավաբանի միակ «աշխատանքային գործիքն է»: ըստ այդմ՝ այն պետք է լավ հարմարեցված լինի «աշխատանքային նյութին» (այն է՝ իրավական հարաբերությունների համակարգին):

Իրավական լեզվի բարդաբնույթ և եզակի բառամթերքը: Իրավական եզրութաբանությունն իրավունքի լեզվի թերևս ամենաակնառու լեզվական առանձնահատկությունն է («իրավունքի լեզու» դարձվածքի «իրավունք» մասը սովորաբար վերագրում են եզրութաբանությանը):

¹ **Pearson, Jennifer.** *Terms in Context*, Amsterdam, 1998, p. 28.

² **Widdowson, Henry G.** *Explorations in Applied Linguistics*, Oxford, 1979, p. 24.

Մենք իրավունքի (իրավաբանական) եզրույթը դիտարկում ենք ընդհանուր համատեքստում: Բանն այն է, որ սեմանտիկական/իմաստաբանական ուղղության ներկայացուցիչները³ տարբերակում են բառը (որպես պարա-դիգմատիկ և ձևաբանական նպատակներով առանձնացվող անկախ միավոր) և բառային միավորը (որը ունի ոչ միայն որոշակի ձև, այլև որոշակի իմաստ)՝ լեքսիմը:

Քանի որ մեզ հետաքրքրում են իրավաբանական անգլերենից թարգմանության խնդիրները, ապա մենք բառը կօգտագործենք լայն իմաստով, այն է՝ որպես բառային միավոր:

Իրավաբանական թարգմանության մեջ կան բազմաթիվ բառային և եզրութաբանական խնդիրներ: Մենք կդիտարկենք միայն չորս հիմնականը, որոնք իսկապես խնդիրներ են առաջացնում, ընդ որում՝ շատ լեզուներում: Դրանք են՝

1) իրավական հասկացությունների թարգմանության համարժեքության հիմնահարցերը.

2) իրավաբանական եզրույթներ, որոնք առնչվում են իրավունքի և իրավական ինստիտուտների հետ.

3) հոմանիշների հիմնահարցը.

4) եզրութաբանական դժվարություններ, որոնք առաջանում են լեզվաբանական անորոշությունից՝ բազմիմաստություն, ոչ հստակություն և այլն:

Այս խնդիրները սերտորեն աղերսվում են թարգմանության տեսության հիմնահարցերում արմատական փոփոխություններին:

Մյուս կողմից՝ այդ խնդիրները առնչվում են բառամթերքի տարբեր դասակարգումների հետ: Դ. Մելինկոֆը⁴ խմբավորում է բառամթերքը ութ դասերի՝

- ընդհանուր իմաստի բառերը, որոնք ունեն հատուկ իմաստներ (*prayer*-ը որպես *pleadingy* ձև),

- հին և միջին անգլերեն բառեր (*Witnesseth*),

- լատիներեն բառեր և դարձվածքներ (*lex fory*),

- հին ֆրանսերեն և նորմանական ծագմամբ բառեր (*plaintiff*),

- արվեստի բնագավառի բառեր (*feesimle*),

- արգո՝ ժարգոն (*taking the fifth*),

- ձևական դարձվածքներ (*approach the bench*),

- ճկուն իմաստներով բառային միավորներ (*reasonable*):

Մեկ այլ դասակարգմամբ⁵ իրավական բառամթերքը բաժանվում է երեք դասի՝

³ Saeed, John I. *Semantics*. 2nd ed, Oxford, 2003, p. 56-57; Murphy, M. Lynne, *Semantic Relations and the Lexicon*, Cambridge, 2008, p. 15; Halliday, M.A.K., Teubert, Wolfgang, Yallop, Colin, Cermáková, Anna, *Lexicology and Corpus Linguistics*, London, New York, 2004, Continuum, p. 2; Hoey, Michael. *Lexical Priming*. London, New York, 2006, Routledge, p. 156.

⁴ Mellinkoff D. 1963. *The Language of the Law*. Eugene, OR: Resource Publications, (reprint 2004), p. 11).

1. «Մաքուր» իրավական տերմիններ, որոնք քիչ հանդիպող բառային միավորներ են (օրինակ՝ իրավական մաքսիմները), և որոնք իրավունքի ոլորտից դուրս չեն օգտագործվում: Օրինակ՝ “*detinue*” (ուրիշի սեփականության անօրինական բռնագրավում) կամ “*asporation*” (առևանգել, բռնագրավել, ուժով ձեռք բերել): Այս դասի մեջ սովորաբար մտնում են հին և միջին անգլերեն բառեր և լատիներեն բառային և դարձվածքային միավորներ: Այս դասի մեջ են մտնում նաև *here* – բառերը (*herein, hereof, heretofore*), *where* – բառերը (*whereas, whereby*), *there* – բառերը (*thereat, thereby, therewith*):

2. Անօրյա գործածության իրավական եզրույթներ. դրանք բառային միավորներ են, որոնք ունեն իրավական իմաստ. օրինակ՝ “*land*”, “*negligence*”, “*law*”:

3. Անօրյա գործածության բառեր, որոնց տրված իրավական համատեքստում վերագրում են հատուկ ենթատեքստ: Առավել հաճախ այդպես է լինում, երբ ընդհանուր օգտագործման որևէ բառ կամ դարձվածք ձեռք է բերում նոր սեմանտիկ/ իմաստաբանական չափում՝ նեղացնելով կամ լայնացնելով բառի բուն նշանակությունը: Օրինակ՝ «Կենդանիների սոցիալական ապահովության Անգլիայի օրենքը» (*The British Animal Welfare Act 2006*) կենդանին սահմանում է որպես «ողնաշարավոր, որը տարբերվում է մարդուց», բայց որոշակի պարագաներում օրենքը թույլատրում է դրանում «ներառել նաև որոշ անողնաշարավորներ»:

Այս տեսակ դասակարգումները կարևորվում են մի շարք հանգամանքներով: Բանն այն է, որ XX դ. վերջին արմատական փոփոխություններ կատարվեցին թարգմանության տեսության մեջ. ի հայտ եկան պրագմատիկ գործոնների վրա հիմնված մոտեցումներ. թարգմանությունը ավելի հաճախ դիտարկվում է որպես հաղորդակցական և միջմշակութային գործողություն՝ մի կողմից ղեկավարվելով այն բոլոր մոտեցումները, որոնք հիմնվում էին բացառապես լեզվաբանական գործոնների վրա: Թարգմանիչն այլևս չի դիտարկվում որպես պասիվ միջնորդ, նա միջմշակութային դիտարկող է, որի թարգմանաբանական ընտրությունները աստիճանաբար դառնում են հասցեակենտրոն՝ հիմնվելով ոչ միայն կոնկրետ լեզվաբանական չափանիշների, այլև արտալեզվաբանական պատկերացումների վրա, որտեղ առաջնահերթ դեր ունի թարգմանված տեքստի գործառնությունը թիրախ մշակույթում: Այսօրինակ մոտեցումը, որը կենտրոնացած էր “*skopos* և *target orientedness*” հասկացությունների վրա, սկզբնաղբյուր տեքստը այլևս չի դիտարկվում որպես թարգմանության գնահատման միակ չափանիշ, այլ նաև գնահատում է թարգմանությունը՝ թիրախ մշակույթում հաղորդակցական մշակույթի համարժեքության տեսանկյունից:

Մյուս կարևոր հանգամանքն այն է, որ գործնական տարբերություններ կան երկու հիմնական՝ ընդհանուր իրավունք և քաղաքացիական իրավունք ընտանիքների հայեցակարգերի միջև: Ավելին, անհրաժեշտ է նշել, որ

⁵ **Riley, Alison.** The Meaning of Words in English Legal Texts: Mastering the Vocabulary of the Law – A Legal Task. Law Teacher 29–30, 68–83. London, 1995, p. 73–79.

եվրաինտեգրման հետևանքով աստիճանաբար զարգանում է մեկ նոր համաեվրոպական իրավական համակարգ՝ Եվրոպական իրավունքը (Եվրամիության իրավունքը): Այս իրավունքը միահյուսված է Եվրամիության անդամ երկրների ներպետական իրավական հասկացությունների հետ: Եվրոպական իրավունքը մասամբ ունի իրավական հասկացությունների իր սեփական ապարատը, իսկ մյուս մասը ներպետական հասկացություններն են, որոնք գործածվում են Եվրամիությանը հատուկ իմաստով:

Իրավաբանական թարգմանությունը պատկանում է թարգմանության այն տեսակներին, որտեղ թարգմանիչը ենթարկվում է ամենախիստ իմաստաբանական/սեմանտիկ/ սահմանափակումների՝ լեզվական բոլոր մակարդակներում. իրավունքի լեզուն սովորաբար կարծրատիպային է, ոչ հստակ և արխայիկ (հնառձ), իրավագիտական դիսկուրսը/խոսույթը/տրամախոսությունը մշակութափոխ է, և իրավագիտական տեքստերն ունեն հատուկ պրագմատիկ կարգավիճակ, որոնք առավել խոր ուսումնասիրության կարիք ունեն:

Իրավական հասկացություններ և եզրույթներ: «Հասկացությունը» առարկայի (երևույթի) մտային ներկայացումն է: Այն առարկայի վերացական կերպարն է՝ ստեղծված մարդու ուղեղում՝ առարկայի «Էական» հատկանիշների առանձնացմամբ: «Եզրույթ»-ը հասկացության տեխնիկական պրոյեկցիան է:

Իրավական հասկացություններն ընդհանրական իրավական դատողությունների և նորմերի վերացարկում են: Այդ առումով իրավական հասկացությունների թարգմանության հարցը մշտական արդիականություն ունի՝ հատկապես իրավական տարբեր համակարգերի առումով: Օրինակ՝ անգլո-սաքսոնական իրավական համակարգում “theft” հասկացությունը և կոնտինենտալ իրավական համակարգում (Գերմանիա) դրան համարժեք “Diebstahl” հասկացությունը և հայերեն «գողություն» հասկացությունը տարբեր են:

Կարելի է բերել բառերի այլ օրինակներ, որոնք լեզվական իմաստով համարժեք են, բայց հայեցակարգային առումով համարժեք չեն: Ասենք, անգլերենի “good faith”-ը և դրան զուգահեռ ֆրանսերենում (կամ գերմաներենում)՝ “bona fides”-ը նույնը չեն: Կամ անգլերենի “the Court of Appeal”-ը և դրան համարժեք իտալերենի “Corte d’appello”-ն նույնը չեն: Կամ ֆրանսերենի “notaire”-ն և սեմանտիկորեն դրան համարժեք “notary”-ն հայեցակարգային իմաստով տարբեր են:

Իրավական եզրույթներ: Իրավական եզրույթներ, որոնք առնչվում են իրավունքի ինստիտուտների հետ: Հայտնի է, որ ցանկացած տեքստի ուսումնասիրության ժամանակ անհրաժեշտ է հենվել նախ և առաջ ծանոթ բառերի և արտահայտությունների վրա, բայց այդպիսի «ծանոթությունը» կարող է կեղծ լինել, քանի որ առաջին հայացքից ընդհանուր բառապաշարի բառերը կարող են ունենալ բոլորովին այլ նշանակություն: Օրինակ կարող է ծառայել “case” տարածված գոյականը, որն իրավաբանական եզրույթ է և ունի հետևյալ սահմանումը՝ “a general term for an action, cause, suit, or controversy, at

law or in equity; a question contested before a court of justice”, այդ իսկ պատճառով հարկ է խուսափել դրա կիրառումից այնպիսի արտահայտություններում, որտեղ կարելի է գտնել դրանց համարժեք փոխարինումը, օրինակ՝ *in any case*-ի փոխարեն՝ *in any event, in case – if, in every case – always, in every instance*: Կան օրինակներ, երբ տվյալ բառը երկու անգամ է օգտագործվում և տարբեր նշանակություններով.

• “The popular image of a divorce case has long been that of a private detective skulking through the bushes outside a window with a telephoto lens, seeking a candid snapshot of the wife in flagrante delicto with a lover. Such is not exactly the case”.

Վերոնշյալ օրինակն առանձնանում է նաև նրանով, որ ամենևին ոչ բոլոր բառարաններն են նշում այդ բառերի իրավաբանական նշանակությունները, որոնք բնորոշվում են լեզվի մեջ բավական հաճախակի գործածությամբ:

1. Առանձնակի բարդություն են ներկայացնում նաև այն բառերը, որոնք, լինելով բազմիմաստ, նշանակում են լայն տարածված իրավաբանական հասկացություններ, և որոնց նշանակությունն ամբողջովին կախված է համատեքստից: Ընդհանուր առմամբ, իրավաբանական եզրույթներին բնորոշ է բազմիմաստությունը: Դիսկուսիոն (պատմական) բազմիմաստության դեպքում մեկ եզրույթը արտահայտում է տարբեր հասկացություններ պատմական զարգացման տարբեր փուլերում⁶: Ըստ Վլասենկոյի՝ թեև բազմիմաստությունը դժվարություններ է հարուցում, սակայն «թույլ է տալիս լեզվի բառապաշարին փոխանցել անսահման տարբեր գաղափարներ և զգացմունքներ, որոնք ծագում են սոցիալական կյանքում»⁷: Բազմիմաստության երևույթը ավելի շուտ նորմ է, քան բացառություն իրավաբանական ենթալեզվում: Որպես օրինակ դիտարկենք լատինական *“jus civile”* բառակապակցությունը և դրա տարբերակները ժամանակակից լեզուներում: *“jus civile”* եզրույթը ունեցել է մի քանի իմաստ, որոնց իմաստային նրբերանգները երկու հազարամյակի ընթացքում մասամբ փոխվածկում են միմյանց: Հին Հռոմում սույն եզրույթը վերաբերում էր դասական հռոմեական իրավունքին, իսկ Բյուզանդիայում և միջնադարյան Եվրոպայում *“jus civile”* եզրույթն առնչվում էր հռոմեական իրավունքին և ավելի լայն իմաստով աշխարհիկ պետական իրավունքին՝ ի հակադրություն աստվածային իրավունքի (*jus divinum*) կամ բնական իրավունքի (*jus naturae, jus naturale*): Այնուհետև զարգանում է քաղաքացիական իրավունքի ժամանակակից իմաստը: Սովորական բազմիմաստության դեպքում իրավաբանական եզրույթն ունի երկու կամ ավելի կապակցված իմաստ, որը շատ տարածված է իրավագիտական ենթալեզվում: Դրանցից են՝ *“government, jurisdiction, law”* և այլ եզրույթները: Կարելի է պարզ պատկերացնել, որ ողջ արտահայտության իմաստն առավելապես կախված կլինի դրանց նշա-

⁶ Cornu, G. Linguistique juridique, 3rd ed. (Paris, Montchrestien, 2005), p. 93.

⁷ Власенко Н. А. Язык права, Иркутск, 1997, с. 48.

նակությունից: Բերտոնի իրավաբանական թեզաուրուսի նախաբանում ԱՄՆ Գերագույն դատարանի նախկին դատավոր Վ. Օ. Դուգլասը շատ դիպուկ է ասել այն դերի մասին, որը կարող է ունենալ բառի նշանակությունը արդարադատության գործում:

«Անգլերենում յուրաքանչյուր բառ կարող է ունենալ մի քանի իմաստ: Հաճախ հակասությունը կամ վարկածը կարող է սերտորեն կապված լինել որոշակի բառի կամ եզրույթի կիրառման հետ: Միայն ճշգրիտ լեզու կիրառելով կարող են ջրերը մնալ մաքուր և չաղտոտված՝ հնարավորություն տալով արդարադատության ընթացքին զերծ մնալ խեղաթյուրումներից և մոլորեցումներից»⁸:

Օրինակ՝ համաձայն BLACK'S LAW DICTIONARY, "government" բառը կարող է ունենալ մի շարք նշանակություններ. *The government is but an agency of the state, distinguished as it must be in accurate thought from its scheme and the machinery of government.*

The system of policy in a state; that form of fundamental rules and principles by which a nation or state is governed, or by which individual members of a body politic are to regulate their social actions.

The sovereign or supreme power in a state or nation; The machinery by which the sovereign power in a state expresses its will and exercises its functions.

The framework of political institutions, departments and offices, by means of which the executive, judicial, legislative and administrative business of the state is carried on.

The whole class or body of officeholders or functionaries considered in the aggregate, upon whom devolves the executive, judicial, legislative, and administrative business of the state.

The regulation, restraint, supervision, or control which is exercised upon the individual members of an organized jural society by those invested with authority.

*The act of exercising supreme political power or control*⁹.

Կախված համատեքստից՝ "jurisdiction" բառը կարող է ունենալ հետևյալ նշանակությունները. արդարադատություն, ընդդատություն, իրավագործություն, իրավասություն, ընդդատության շրջանակ, իրավասությունների ոլորտ, դատական ատյան:

administrative jurisdiction վարչական իրավասություն/իրավագործություն.

appellate jurisdiction բողոքարկման իրավասություն.

choice of jurisdiction ընդդատության վայրի ընտրություն.

civil jurisdiction քաղաքացիական ընդդատություն/իրավագործություն.

compulsory jurisdiction of the court դատարանի պարտադիր ընդդատության (ճանաչում)

consular jurisdiction հյուպատոսական իրավագործություն.

⁸ Burton W. C. *Legal Thesaurus* (third edition), New Library Reference USA, 1999, p. 6.

⁹ Black H. C. *Black's Law Dictionary*, 6-th edition, St. Paul, Minn, 1990, p. 1286.

contentious jurisdiction վիճարկվող ընդդատություն.

court of summary jurisdiction նեղ շրջանակի իրավասություններով օժտված (ոստիկանական) դատարան

equitable jurisdiction արդար դատարան

excess of jurisdiction իրավասությունների գերազանցում

jurisdiction of professional associations մասնագիտական միությունների ընդդատություն/իրավասություններ

jurisdiction of professional tribunal մասնագիտացած դատարանին ընդդատյա

jurisdiction of the ordinary court սովորական դատարանի իրավասություն

jurisdiction to hear and determine cases գործերը քննելու և որոշում ընդունելու իրավասություն

level of jurisdiction ատյան

objection to jurisdiction անհամաձայնություն ընդդատության հետ, բացարկ

original jurisdiction առաջին ատյանի իրավասություն

outside the Commission's jurisdiction հանձնաժողովի իրավասությունից դուրս

sole jurisdiction բացառիկ իրավասություն.

(to) exercise jurisdiction լիազորություններ իրականացնել.

(to) fall under/within the jurisdiction ընդդատությանը ենթակա լինել.

2. Հոմանիշությունը բազմիմաստության հակառակ երևույթն է, որտեղ երկու կամ ավելի եզրույթ արտահայտում են միևնույն հասկացությունը: Ըստ լեզվաբանների՝ հոմանիշությունը իրավաբանական ենթալեզվին նույնպես բավական տարածված բնորոշ հատկանիշ է:

Հոմանիշությունը ոչ այնքան հարստացնում է իրավաբանական անգլերենը, որքան հավելյալ խնդիրներ է հարուցում: Օրինակ՝ “cite” և “quote” հոմանիշ տերմինները: Քանի որ անգլո-ամերիկյան իրավունքի համար նախադեպի վկայակոչումն առաջնակարգ նշանակություն ունի, պարզ է, որ այդ բայերի ճիշտ կիրառումից շատ բան է կախված: Դրա համար խիստ կարևոր է հիշել, որ “to cite an authority is to give its substance and to indicate where it can be found”, այն դեպքում, երբ “to quote is to repeat someone’s exact words and to enclose them in quotation marks”:

Անգամ այնպիսի հասարակ բառերի կիրառությունը, ինչպիսիք են «դատավոր» նշանակող “judge” և “justice” բառերը, կարգավորվում է խիստ կանոններով, որոնց չհետևելը հղի է ամենատհաճ հետևանքներով: Միացյալ Նահանգներում, օրինակ՝ “Justice” բառով կոչում են միայն այն դատավորներին, որոնք նստում են վերին ատյանի դատարաններում, որպես կանոն՝ Գերագույն դատարանում (բառը պարտադիր գրվում է մեծատառով, անգամ եթե չի նշվում դատավորի անունը), և “judge” բառով՝ մնացած դատավորներին: Անգլիայի Գերագույն դատարանում, որը բաղկացած է երեք առանձին դատարաններից (Վերին դատարան, Գերագույն քրեական դատարան և Վճռաբեկ դատարան), նստում են “judges”, ստորին ատյանի, Մագիստրատի դատարաններում՝ “justices”:

«Դատարաններ», «դատավարություն» թեման անբալկտելիորեն կապված է այնպիսի բառերի հետ, ինչպիսիք են “decision”, “opinion”, “judgment” բառերը:

Մենք կանխամտածված բացառում ենք “sentence” բառն այդ շարքից, որովհետև այն ակնհայտ կապ ունի քրեական դատավարության հետ, որտեղ դատավճռի կայացումը համարվում է դատավորի արտոնությունը: Դատավարությանն առնչվող բազմաթիվ տեքստերի ուսումնասիրությունը թույլ է տալիս պնդել, որ բոլոր երեք բառերը փոխարինում են միմյանց բրիտանական անգլերենում: Այդ եզրակացությունը հաստատում են հետևյալ օրինակները.

- “The Runciman Commission concluded that the Court of Appeal should show greater willingness to substitute its judgment for that of the jury”.

- “Lord Devlin, in his book “The Judge” (1979) criticized the Court of Appeal’s decision in *Stafford v DPP* to follow their own view of whether new evidence makes a conviction unsafe (or unsatisfactory), rather than assessing the effect such evidence might have had on the trial jury”.

- “The party asks the court to state a case for the opinion of the High court on the question of law or jurisdiction”:

Ներկայացված օրինակների հիման վրա կարելի է հանգել եզրակացության, որ “decision”, “opinion”, “judgment” բառերի կիրառությունը ոչ մի կերպ չի սահմանափակվում դատարանի իրավասություններով կամ նրա ղիրքով անգլիական դատական համակարգի բարդ աստիճանակարգում:

Այլ է դրանց կիրառությունն ամերիկյան անգլերենում: Դատավարության արդյունքն ըստ առաջին ատյանի կոչվում է “judgment”, իսկ վճռաբեկ դատարանի որոշումը՝ “opinion”: Այդ պատճառով հույժ կարևոր է պահպանել այդ տարբերությունը հետևյալ բայական դարձվածքներում.

An appeal court affirms, reverses, or modifies judgments.

An appeal court agrees with, approves or disapproves opinions or decisions.

Օրինակ՝

- “The appellee’s brief should say why the trial court’s judgment should be affirmed not why appellant’s brief is all wrong”.

Ինչպես ցույց է տալիս պրակտիկան, իրավաբանական լեզվում բառագույժորդումը լուրջ խնդիր է: Բերենք ևս մի քանի օրինակ, որտեղ հոմանիշների կիրառությունը հանգեցնում է երկիմաստության.

- “Lawyers generally have a bad reputation; today the American public holds a grudge against the half-million counselors who handle its legal affairs”.

- “One who executes a will believes that the testament covers all contingencies”.

- “State law makes no provisions for mandatory autopsies, which means that justices of the peace follow different policies for seeking postmortems”.

- “Finally, the court held that traditional concepts of the role of admiralty law did not require the finding of a substantial maritime relationship because allowing the parties to pursue state law remedies would not disturb the federal interest of maintaining the uniformity of maritime law”.

Բավական տարածված երևույթ է միևնույն բառի տարբերակների հերթագայությունը մեկ արտահայտության շրջանակում.

• “And unlike Blackstone's blurred account, Coke made it clear that his fictional death would not create new property rights or destroy old ones ... Without resort to fictitious death the law stripped the felon of his property as part of his punishment”:

Իրավագիտական ենթալեզվում որոշակի հետաքրքրություն են ներկայացնում այսպես կոչված երկույթները (*doublet*) և եռույթները (*triplet*). Դրանք երկու կամ երեք հոմանիշային բառերի շարաններ են, որոնք արտահայտում են մեկ ամբողջական իրավական հասկացություն:

Երկույթներ (doublet)

Able and willing (=able)

Agree and covenant (=agree)

All and sundry (=all)

Authorise and direct (=authorise OR direct)

Cancelled and set aside (=cancelled)

Custom and usage (=custom)

Deem and consider (=deem)

Do and perform (=perform)

Due and owing (=owing)

Fit and proper (=fit)

Full and complete (=complete)

Goods and chattels (=goods)

Keep and maintain (=maintain)

Եռույթներ (Triplets)

Cancel, annul, and set aside (=cancel)

Communicate, indicate or suggest (=communicate)

Dispute, controversy or claim (=dispute)

Give, devise and bequeath (=give)

Hold, possess, and enjoy (=hold)

Pay, satisfy, and discharge (=pay)

Possession, custody, and control (=possession or custody or control)

Promise, agree, and covenant (=promise or agree)

Repair, uphold and maintain (=repair or uphold or maintain)

Way, shape or form (=way)

Իրավագիտական ենթալեզվում պատկանում է հատուկ նպատակների լեզուների այն շարքին, որտեղ թարգմանիչը ենթարկվում է ամենախիստ իմաստարանական/սեմանտիկ սահմանափակումների լեզվական բոլոր մակարդակներում: Ամփոփելով կարելի է առանձնացնել,

որ իրավունքի լեզուն սովորաբար կարծրատիպային է, ոչ հստակ և արխայիկ (հնառճ), իրավագիտական դիսկուրսը/խոսույթը/տրամախոսությունը մշակութափոփոխ է, իրավունքի լեզվին հատուկ են բազմիմաստությունը և հոմանիշությունը, իսկ իրավագիտական տեքստերն ունեն հատուկ պրագմատիկ կարգավիճակ, որոնք առավել խոր ուսումնասիրության կարիք ունեն:

ОСОБЕННОСТИ СОВРЕМЕННОГО ЮРИДИЧЕСКОГО ЯЗЫКА В КОНТЕКСТЕ СЕМАНТИКИ

АРУТЮНЯН А. А.

Резюме

Язык права рассматривается не только как семиотическая структура, но и как неотъемлемая часть правовой системы, отличающаяся логической своеобразностью и функциональной особенностью. Соответственно, язык права находится в существенной связи с правовой системой и культурой данного общества в конкретный период, и в силу сказанного он является социальным феноменом.